ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻԵՎ ՍՊՈՐՏԻՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՌԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

2024-2029ԹԹ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Ներածություն----------4

2. Հաստատության գործունեությունը----------5

2.1 Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում դպրոցը----------7

2.2 Համապատասխանու՞մ է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին----------9

2.3 . Համապատասխանու՞մ է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին-----10

3.Իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը----------25

3.1 Հաստատության շենքային պայմանները----------25

3.2 Նյութատեխնիկական բազան----------27

3.3 Հաստատության տնօրենի, կառավարման և խորհրդակցական մարմիններ համագործակցության վերլուծություն----------28

3.4 Հաստատության համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ----------29

3.5 Ուսումնական միջավայր, բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն----------31

3.6 Մանկավարժական համակազմը, աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն----------32

3.7 Կրթության որակը, չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն----------34

3.8 Օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները----------35

3.9 Հաստատությունում առկա հիմնախնդիրները----------36

4. Նպատակների և խնդիրների սահմանումը----------38

5.Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը----------41

6.Պատասխանատուները----------55

7.Արդյունքների գնահատման չափանիշները----------56

8.Ռիսկերը----------60

9. Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները------62

10. Վերահսկողության մեխանիզմները----------62

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր հանրակրթական դպրոցի գործունեություն ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար ցանկալի է առաջնորդվել ծրագրով,որը կլինի այդ դպրոցի հետագա հինգ տարիների տեսլականը, այն իր մեջ կընդգրկի դպրոցի ներկա վիճակի վերլուծությունը, գոյություն ունեցող հիմնախնդիրները և կսահմանի նպատակներ ու խնդիրներ, որոնց իրականացմանը ուղղված գործողություններովմենք կհասնենք մեր մտապատկերում գոյություն ունեցող դպրոցի մոդելին: Այդ դպրոցում սովորողը կկարողանա իրացնել <<Հանրակրթության մասին>>, <<Կրթության մասին>> ՀՀ օրենքներով, <<Երեխայի իրավունքների մասին>> կոնվենցիայով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված իրավունքները , ստեղծված համապատասխան միջավայրում կապահովվի նրա բազմակողմանի զարգացումը, առողջության պահպանումը, ինքնակրթության և լրացուցիչ կրթության հնարավորությունները:

Ներկայումս գործող կրթական համակարգը նպատակ է հետապնդում ամրապնդել հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժը, ազգային արժեքներն ու ավանդույթները: Վերջին տարիներին տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՀՏ) ազդեցությամբ հասարակությունը շատ է հեռացել մեր արմատներից, մեր արժեհամակարգից, բոլորը ձգտում են դեպի արևմտյան և եվրոպական բարքեր, ավանդույթներ և մշակույթ, ինչը կտանի ազգային արժեհամակարգի վերացմանը:Մենք պետք է փորձենք պահպանել մերը՝հայկականը, քայլելով ժամանակին զուգընթաց, ընդունելով նորը, չպետք է անտեսել հինը, մեր ազգային մշակույթն ու սովորույթները. դա պետք է ապահովել մեր դպրոցի և կրթության շնորհիվ, ուսուցիչն էլ,որպես բարոյական կերպար, պետք է ցույց տա հայի տեսակը և օրինակ լինի իր աշակերտի համար, որ վերջինս ցանկանա նմանվել այդ տեսակին՝ հայի տեսակին:

Խոսելով ՏՀՏ-ների մասին, պետք է նշել, որ ներդրված Հանրակրթական պետական չափորոշիչներով(այսուհետ՝ ՀՊՉ) կրթությամբ՝ հիմնական շեշտը դրվում է ՏՀՏ-ների կիրառման, նոր մեթոդների ներմուծման վրա, որոնց շնորհիվ կրթության որակը էլ ավելի կբարձրանա, այն կդառնա ավելի մատչելի, բոլորին հասանելի, շարունակական (անկախ վրա հասած դժվարություններից՝ արտակարգ իրավիճակ, ռազմական դրություն): Բազմակարծիք, ներառական և մասնակցային կրթությամբ առավել կմեծանա կրթության գործընթացի յուրաքանչյուր մասնակցի դերը կառավարման հարցում, հատուկ ուշադրության կարժանացվեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող(այսուհետ ԿԱՊԿՈՒ) սովորողները:

Նոր չափորոշիչների ներդրման արդյունքում մենք կթողարկենք շրջանավարտներ, ովքեր կդառնան բազմակողմանի զարգացած, մասնագիտական կողմնորոշում ունեցող կոմպետենտ քաղաքացիներ՝ զինված գիտելիքներով, հմտություններով, հստակ արժեքներով և դիրքորոշումներով, ովքեր պատրաստ են ընդունել արդի մարտահրավերները և դիմակայել ցանկացած դժվարության:

Զարգացման ծրագիրը կազմել եմհաշվի առնելով պետության կրթական քաղաքականության միտումները, նոր չափորոշչի պահանջները, գյուղի հիմնախնդիրները, դպրոցի հնարավորությունները, ինչպես նաևդպրոցի խորհրդակցական մարմինների վեր հանած կրրթական կարիքներն ու արված առաջարկությունները:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի համառոտ տեղեկանք

Անվանումը՝ «ՀՀ Լոռու մարզի Կաթնառատի միջնակարգ դպրոց»
Հասցե՝ Լոռու մարզ, գյուղ Կաթնառատ
Տնօրենի հեռ.՝ +374 93 18 88 24
Էլ. փոստ՝ katnarat.schoolsite.am , katnaratschool@yandex.com
Կազմակերպա-իրավական տեսակը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն
Իրավաբանական տեսակը՝ իրավաբանական անձ
Ենթակայությունը՝ մարզային

ՈՒսումնական հաստատությունը իր գործունեության արդյունավետ կազմակերպման համար պետք է սահմանի գործունեության նպատակ, ելնելով նոր չափորոշիչներից, ուսումնական հաստատության գերակա նպատակը յուրաքանչյուր սովորողի, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և ՀՊՉ սահմանված վերջնարդյունքների ապահովումն է: Կրթական գործընթացը իրականացնելիս ցանկալի է նաև հաշվի առնել, որ դպրոցը սովորողի համար պետք է դառնա այն վայրը,որտեղ նա իրեն լավ է զգում, ապահով, պաշտպանված ամեն տեսակ բռնությունից և հալածանքից, և ամեն օր դպրոցից դուրս գալուց աշակերտը պետք է նոր գիտելիք ձեռք բերած լինի, նոր հմտություն և սովորածը կյանքում՝ իր առջև ծառացած խնդիրները լուծելիս, կիրառելու կարողունակություն:

Հաստատության գործունեությունը պետք է հիմնված լինի այնպիսի սկզբունքների վրա, ինչպիսիք են ժողորդավարությունը, մարդասիրությունը, հանրամատչելիությունը, թափանցիկությունը, անձի ազատ զարգացումն ու ինքնավարությունը, և այլ կարևորագույն սկզբունքներ, որոնցով կրթված և դաստիարակված մարդը միայն կարող է դառնալ պետության ու հասարակության լիարժեք անդամ: Դպրոցում է կերտվում անձը, նրա տեսակը և հետո այդ անձն էլ ստեղծում է ընտանիք, որը դառնում է պետության հիմքը, հանրակրթությունն էլ պետության պատվերն է դպրոցին, ստացվում է միմյանց հետ փոխկապակցված եռօղակ համակարգ.



Հետևաբար թեկուզ մեկ օղակի թերի գործունեությունը անրադառնում է ամբողջ գործընթացի վրա և արդյունքում՝ թերի դպրոց, թերի ընտանիք, թերի պետություն:

«ՀՀ Լոռու մարզի Կաթնառատի միջնակարգ դպրոցը» (այսուհետ դպրոց), առաջնորդվում է բոլոր վերը նշված սկզբունքներով և լիարժեք կատարում է պետության պատվերը՝ իր ունեցած հնարավորությունների սահմաններում:

2.1 Ինչ կրթական կարիքներ է բավարարում դպրոցը

Դպրոցըբավարարում է սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքներըև այն իրականացնում է՝

Կառավարման միջոցով. այստեղ շեշտը դրվում է սովորողների կրթական կարիքների բացահայտման ու նկարագրման վրա, ինչպես նաև այդ կարիքների բավարարմանն ուղղված գործողությունների մշակման ու իրագործման վրա:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների միջոցով.սա կրթական կարիքների բավարարման բուն գործընթացն է, որը իրականացվում է ուսուցչամանկավարժական անձնակազմի կողմից:

Վարչատնտեսական գործունեության միջոցով. այս դեպքում դպրոցիհնարավորությունների գնահատման հիման վրա կազմակերպվում է նպաստավոր միջավայր ուսումնական գործընթացի իրականացման համար:

ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքների կազմակերպման միջոցով. այն իրականցվում է դպրոցի ուսուցչի օգնականի և ՏՄԱԿ-ի համագործակցությամբ:

<<ՀՀ Լոռու մարզի Կաթնառատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը 2003թ. գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի Տաշիրի տարածքային բաժնում, 2010թ. հաստատվել է դպրոցի նոր կանոնադրությունը, որը հետագայում փոփոխություններ է կրել:

Ըստ տրված լիցենզիայի դպրոցը իրականացնում է

- ✓ նախադպրոցական կրթական ծրագիր՝ ավագ նախադպրոցական տարիքային փուլ (15 տեղ,լիցենզիայի համար՝ 0648 սերիան Ա)

Լիցենզիան տրվել է 2020թ. փետրվարի 24-ի

- ✓ տարրական հանրակրթական՝ 1-ին աստիճան (31 տեղ, լիցենզիա 0767 սերիա Ա)

- ✓ հիմնական հանրակրթական՝ 2-րդ աստիճան (47 տեղ, լիցենզիա 0756 սերիա Ա)

- ✓ միջնակարգ հանրակրթական՝ 3-րդ աստիճան (44 տեղ, լիցենզիա 0624 սերիա Ա)

Լիցենզիան տրվել է 2011թ. դեկտեմբերի 5-ին

Դպրոցը գործում է հարմարեցված շենքերում՝ ժամանակավոր անհատույց օգտագործման իրավունքով, ունի 33 աշխատակից, նրանցից 2-ը վարչական, 24-ը մանկավարժական, իսկ 7-ը ուսումնաօժանդակ աշխատողներեն

Դպրոցի խորհրդակցական մարմիններն են՝

- մանկավարժական խորհուրդ (ընդգրկված են բոլոր մանկավարժական աշխատողները),

- աշակերտական խորհուրդ
- ծնողական խորհուրդ (ընդգրկված են դասարանական ծնողական խորհուրդների նախագահները)։

Այս պահին դպրոցում սովորում է 117 աշակերտ՝ ընդգրկված 12 դասարաններում և նախակրթարանի 5 սան։
(2022-2023 ուստարվա սկզբին սովորողների թիվը 125 էր և նախակրթարանի 8 սան)։
Դպրոցը միահերթ է, աշխատանքային շաբաթը՝ հնգօրյա։

2.2 Համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

Ուսումնական գործընթացն կազմակերպելիս դպրոցը պետք է հաշվի առնի պետության որդեգրած կրթական քաղաքականության միտումները, համայնքի և շահառու խմբերի կարիքներն ու հնարավորությունները, նպատակն է ձևավորել պետության, համայնքի զարգացմամբ մտահոգ և նախաձեռնող սերունդ:

Դպրոցը հնարավորինս համագործակցում է պետության և համայնքային մարմինների հետ, սակայն վերջիններս այնքան էլ ակտիվ չեն տարբեր նախաձեռնություններում, պասիվ են համատեղ միջոցառումների կազմակերպման և իրականացման հարցերում: Ես իմ առջև նպատակ եմ դրել ավելի ակտիվացնել կապը համայնքի, գյուղի և հասարակության հետ, քանի որ գյուղին և գյուղի խնդիրներին, որոնք շատ-շատ են, մոտ կանգնելու դեպքում, սովորողների մոտ վաղ տարիքից կձևավորվի հոգատար վերաբերմունք պետության և իրենց համայնքի նկատմամբ, որ արդեն կայացած մարդ դառնալով երիտասարդները ոչ թե լքեն իրենց գյուղերը, այլ մնան և փորձեն բարեփոխել, ծաղկեցնել իրենց համայնքները:

Մեր գյուղը ունի շատ կարիքներ, լուրջ հիմնախնդիրներ, որոնք անրադառնում են նաև դպրոցի վրա, երիտասարդների և երեխաների առօրյայի կազմակերպման վրա: Նման համայնքներում, հատկապես, կարևոր է դպրոցի դերն ու գործունեությունը, քանի որ դպրոցը միակ տեղն է, որտեղ երեխաները մասամբ կարող են բավարարել իրենց պահանջմունքները և նախասիրությունները: Այդ իսկ պատճառով առավել առաջնային է, որ նման գյուղերում դպրոցն ունենա լիարժեք շենքային պայմաններ, որ կարողանա կազմել և իրականացնել տարբեր խմբակների ծրագրեր, նախագծային աշխատանքներ և միջոցառումներ, դա համայնքի շահերից է բխում նաև:

2.3 . Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

Դպրոցի ենթակառուցվածքներըշատ թույլ են,աղքատիկ, չեն համապատասխանում ստանդարտներին և չեն տալիս բավարար հնարավորություն ուսումնական գործընթացը լիարժեք կազմակերպելու համար:

Դպրոցն ունի 12 դասասենյակ, ուսուցչանոց, տնօրենի կաբինետ, խոհանոց, ճաշարան, սննդի պահեստ, փոքրիկ գրադարան, 3 սանհանգույց, Արմաթ լաբորատորիա,ապահովված է ինտերնետ կապով, չունի մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ, սպորտհրապարակ՝ անհրաժեշտ գույքով: Դպրոցը չունի նաև ԿԱՊԿՈՒ սովորողների համար նախատեսված դասասենյակ և հարմարեցումներ:

Պարբերաբար դպրոցում կատարվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, փոխվել է մուտքի դուռը, դպրոցի դիմաց մի որոշակի հատված սալիկապատվել է: Սակայն անկախ շենքային պայմաններից, դպրոցում տիրող բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտի, մանկավարժների հոգատար վերաբերմունքի և մասնագիտական բարձր որակների շնորհիվ, դպրոցը գրավում է սովորողներին և յուրաքանչյուր երեխա այդ դպրոց հաճախում է սիրով:

Շենքային պայմաններ, գույք, սարքավորումներ

N	Շենքայինպայմանները	Քանակը	Ընդհանուր մակերես ը/մ²	Փաստացիվիճակը
1.	Երկհարկանի 1 մասնաշենք, Համայնքապետարանի 1-ին հարկ	2	536,2 մ²	բավ

2.	Դասասենյակ	12	262,5մ²	բավ
3.	Գրադարան	1	8,8 մ²	բավ
4.	ՈՒսուցչանոց	1	15,5 մ²	բավ
5.	Տնօրենի կաբինետ	1	13,4 մ²	բավ
6.	<<Արմաթ>> ինժեներական լաբորատորիա	1	35 մ²	բավ
7.	Ճաշարան	1	29,8 մ²	լավ
8.	Սննդի պահեստ	1	2 մ²	լավ
9.	Սանհանգույցներ	3	8,4 մ²	լավ
10.	Գույքի պահեստ	1	2 մ²	բավ
11.	Նախակրթարան	1	37,5 մ²	լավ

N	Գույք,սարքավորումներ	Քանակը	Վիճակը
1.	Աշակերտականսեղան	100	Բավ
2.	Աշակերտականաթոռ	200	Բավ

3.	Գրատախտակ	15	Բավ
4.	Լվացարանծորակով	3	Բավ
5.	Ուսուցչականսեղան	5	Բավ
6.	ՈՒսուցչական աթոռ	12	Բավ
7.	Ճաշարանիսեղան հարմարեցված	10	Բավ
8.	ՃաշարանիԱթոռ հարմարեցված	26	Բավ
9.	Պահարան	12	Լավ
10.	ՈՒսումնականհամակարգիչ	8	Լավ
11.	Աշխատանքայինհամակարգիչ	3	Լավ
12.	Համակարգչայինսեղան	7	Լավ
13.	Երկաթյա պահարան	2	Բավ
14.	Փափուկ կահույք	1	Բավ
15.	Պրոյեկտոր	2	1 լավ, 1 խափանված
16.	Սառնարան, սառցարան	1	Լավ
17.	Գազօջախ	1	լավ
18.	Էլեկտրական ջեռուցիչներ	12	Բավ
19.	Ջրատաքացուցիչ	1	Լավ

20.	Տպիչսարքեր	2	Լավ
21.	Սկաներ + տպիչ	3	լավ

Մարդկային ռեսուրսներ

N	**Մարդկայինռեսուրսներ**	քանակ
1.	Վարչականաշխատողներ	2
2.	ՈՒսուցիչներիընդհանուրթիվ	20
3.	Սովորողներիթիվ	117
4.	Բարձրագույնկրթությամբուսուցիչներ	16
5.	Միջին մասնագիտական որակավորմամբ ուսուցիչներ	4
6.	ՈՒսուցչի օգնական	1
7.	Կամավորատեստավորվածուսուցիչներ	2
8.	Առարկայականմեթոդմիավորումներ	3
9.	ՈՒսումնաօժանդականձնակազմը	7

10.	Հաշվապահ	1
11.	Գրադարանավար	1
12.	Դաստիարակ	1
13.	Օպերատոր	1

Հաստիքներ

	Հաստիքի անվանումը	Հաստիքի թիվը
1.	Տնօրեն	1
2.	Վարչատնտեսական համակարգող	1
3.	Տնօրենի տեղակալ ուսումնական գծով	0,75
4.	ՏնօրենիտեղակալՄԿԱ-իգծով	0,75
5.	ԴԱԿ	0,75
6.	Զինղեկնքաղպաշտպանություն	1,3
7.	Ուսուցիչներ	20
8.	ՈՒսուցչի օգնական. ,	1

9.	Դաստիարակ	1
10.	Գրադարանավար	1
11.	Օպերատոր	0,75
12.	Կադրերի գծով մասնագետ	1
13.	Հոգեբան	0,75
14.	Հավաքարար	2
15.	Պահակ	3
16.	Խոհարար	0,5
17.	Տնտեսվար	1
18.	Հաշվապահ	1
19.	Բանվոր	0,75

Մանկավարժական համակազմ

1.	Ուսուցիչներ	20
2.	Զինղեկ և քաղպաշտպանություն	1
3.	Ուսուցչի օգնական	1
4.	Դաստիարակ	1
5.	Գրադանավար	1

ՈՒսումնաօժանդակ անձնակազմ

1.	Հաշվապահ	1
2.	Օպերատոր	1

Սպասարկող անձնակազմ

1.	Հավաքարար	2
2.	Պահակ	3

3.	Բանվոր	1

Կառավարման և խորհրդակցական մարմիններ



Դպրոցի կառավարման խորհուրդը միացյալ է, կազմված՝ 14 անդամից

Մանկավարժական խորհրդում ընդգրկված են բոլոր մանկավարժական աշխատողները, ծնողխորհրդի և աշխորհրդի նախագահները՝ 26 անդամ

Ծնողական խորհուրդը կազմված է դասարանական ծնողական խորհրդի նախագահներից՝ 13 անդամ

Աշակերտական խորհուրդը կազմված է 11 անդամից

Առարկայական մեթոդական միավորումները 3-ն են՝

- տարրական
- բնագիտական
- հումանիտար

Կառավարման և խորհրդակցական մարմինները իրականացնում են իրենց օրենսդրությամբ և կանոնադրությամբ վերապահված լիազորությունները հերթական և արտահերթ ռեժիմներով, մասնակցային և համագործակցային եղանակներով՝ իրենց աշխատակարգին համապատասխան:

Կառավարման խորհուրդը գործում է միացյալ, վերահսկում է հաստատության ուսումնադտիարակչական և ֆինանսատնտեսական գործունեությունը, սերտ համագործակցում է տնօրենի հետ, հետևողական լինելով այդ գործունեության ճիշտ, նպատակային և արդյունավետ իրագործմանը:

Մանկավարժական խորհուրդըքննարկում է օրենքով, դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված հարցերը՝ առավելապես հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման, սովորողների առողջության, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների անհատական ուսուցման պլանների, կրթության որակի ապահովման հետ կապված հարցերը:

Աշակերտական խորհուրդը կարևոր ու առանցքային դերակատար պետք է լինի ինչպես ժողովրդավարական արժեքների կրթման գործնական կիրառության համար, այնպես էլ՝ որպես խորհրդակցական մարմին, որը ներգրավված է դպրոցական կյանքի կարևորագույն որոշումների ընդունմանը:

Ծնողական խորհրդի դերը ոչ պակաս կարևոր է, քանի որ ծնողական համակազմը պետք է ուսուցչական համակազմի աջակիցը լինի, ոչ թե պետք է պահանջի ուսուցչից, այլ պետք է դառնա ուսուցչի գործընկերը իր իսկ երեխայի կրթման և դաստիարակման հարցում, քանի որ առանց ծնողի հետևողական աշխատանքի թերի կլինի ուսուցչի աշխատանքը և ապարդյուն՝ նրա ջանքերը:

Մեթոդական միավորումների ջանքերով է, որ դպրոցում կարող է բարձրանալ կրթության որակը, քանի որ նրանք պետք է ապահովեն նոր և առավել արդյունավետ մեթոդների ներմուծումը, դրանց կիրառումը, առաջավոր փորձի փոխանակումը և պարբերաբար կազմակերպվող խորհրդակցությունները:

Այս ամենը հանգեցնում է նրան, որ դպրոցում կարևոր և առանցքային է բոլոր մարմինների գործունեությունը, այդ ամենը պետք է կազմակերպվի տնօրենի անմիջական մասնակցությամբ, վերահսկողությամբ, նրա ճիշտ ուղղորդումներով և, որ ամենակարևորն է՝ հենց տնօրենի հետ համագործակցությամբ: Այս հարցում կարևորում եմ զարգացնելծնող-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-ուսուցիչ, հարաբերությունները, քանի որ համագործակցությունը կբխի աշակերտի շահերից: Ճշմարիտ է այն, որ դպրոցը չի կարող լուծել իր առջև ծառացած խնդիրները, եթե նույնիսկ ունակ ու պատրաստ լինի, եթե միայնակ է:

Ցանկացած կրթական համակարգ պետք է համախմբի կրթական գործընթացի բոլոր մասնակիցների (ուսուցիչ, աշակերտ, ծնող) ներուժը և ստեղծի նրանց միջև արդյունավետ համագործակցություն ինչպես դպրոցի, համայնքի, այնպես էլ պետական մակարդակում և այդ դեպքում իրագործելի կդառնան բոլոր նպատակները, որոնք կդրվեն դպրոցի առջև:

Դպրոցի առաջնային խնդիրն է բարձրացնել սովորողների ուսման որակը, գովելի է այն փաստը, որ չառաջադիմող, երկտարեցի աշակերտներ չունենք, տարեկան շրջանավարտների առնվազն 25 տոկոսը ընդունվում են ԲՈՒՀ-եր:



Շատ կարևոր է ծրագիրը կազմելիս, կրթության որակի մասին խոսելիս առաջնորդվել մի քանի կարևոր պայմաններով, նախ կրթության որակն համապատասխանեցնել չափորոշչի պահանջներին, ստեղծել բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր,ինչպես նաև արժևորել,խրախուսել նինքնակրթության հնարավորություններ ստեղծել անձնակազմի համար, ճիշտ կազմակերպել ֆինանսատնտեսական գործունեությունը:

Կրթության որակն ըստ չափորոշչային պահանջների

Հանրակրթական պետական չափորոշիչը նորմատիվ փաստաթուղթ է, որը ըստ կրթական աստիճանների, սահմանում է սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն և նվազագույն ծավալը, սովորողների գնահատման համակարգի սկզբունքները, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները և հանրակրթական միջնակարգ կրթական ծրագրի շրջանավարտին ներկայացվող որակական պահանջները՝ կարողունակությունները:Անհատի կրթական կարիքներին կրթության համապատասխանությունը որորշելու համարկատարվում է չափորոշչային պահանջներին համապատաս խան կրթության որակի

վերլուծություն,ինչը իրենից ներկայացնում է սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության բնութագիրը: Սա հնարավորություն է ընձեռում գնահատել առկա իրավիճակը և դպրոցի առջև դնել նոր նպատակներ ու դրանց հասնելու համար գտնել նոր ուղիներ:

Դպրոցի ուսուցիչների մեծամասնությունը մասնակցել է ՀՊՉ վերապատրաստումներին, մանկավարժական ողջ համակազմը ծանոթ է չափորոշչային նոր պահանջներին և թեմատիկ պլանավորումը կատարվել է այդ պահանջներին համապատասխան: Թեպետ նոր պահանջները մի փոքր անհարմարություններ են առաջացնում, կապված ՏՀՏ կիրառման, և հատկապես, ուսուցիչների ավագ սերնդի աշխատելաոճի անհամապատասխանության, դասագրքերի բացակայության կամ էլեկտրոնային տարբերակով հասանելիության հետ, սակայնուսուցիչների նորարարությանը հարմարվելու և այն ընդունելու պատրաստակամության, երիտասարդ ուսուցիչների մեծ աջակցության շնորհիվ, իրենց մասնագիտական կարողությունները կատարելագործելու ցանկությունից ելնելով, ամեն ինչ հաղթահարվեց և այսօր դպրոցն ունի տարբեր էլեկտրոնային հարթակներից օգտվող, նոր մեթոդներով դասերը հետաքրքիր անց կացնող ուսուցիչներ:

Ինքս իմ հերթին, հաճախակի կիրականացնեմ դասալսումներ, կհրավիրեմ մեթոդմիավորման նիստեր, կիրականացնեմ արդյունքների մշտադիտարկման վերլուծություն՝թերությունների բացահայտման և դրանց շտկման ուղիներ մշակելու նպատակով: Կխրախուսեմ տարբեր միջոցառումների՝ բաց դասերի, վիկտորինաների, տարբեր մեթոդների զուգակցմամբ դասերի վարումը, որի շնորհիվ սկսնակները կստանան օժանդակություն և առաջավոր փորձի փոխանակում, իսկ փորձառուները էլ ավելի կխորացնեն իրենց գիտելիքները:

Նախագծային աշխատանքների իրականացումը, խմբակների վարումը երեխաների մոտ կզարգացնի վերլուծական մտածողություն, առավել հետաքրքիր կդարձնի ուսուցման գործընթացը, իսկ ուսման մեջ չառաջադիմող երեխաները երկարօրյա ուսուցման շնորհիվ կստանան աջակցություն ուսուցիչներից և իրենց լավ սովորող ընկերներից: Ուշադրության կենտրոնում կպահեմ հալածանքի, օտարման և բռնության (այդ թվում բուլինգի) դրսևորումների բացահայտումը և բացառումը:

Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր

Կաթնառատի միջնակարգ դպրոցում մշտապես ապահովված է եղել բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր, այստեղ որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում մանկավարժական, աշակերտական, ծնողական համակազմի կարծիքները, փոխադարձաբար հարգվում են ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների իրավունքները, երբևիցե չի դրվում սոցիալական, ազգային կամ սեռային խտրականություն, առաջին տեղում միշտ սովորողի շահն է, նրա անհատականությունը, ուսումնական միջավայրի անվտանգությունը և, իհարկե, կրթության որակը:

Դպրոցը իրականացնում է նաև ներառական կրթություն, 117 սովորողներից 8-ը ԿԱՊԿՈՒ սովորողներ են, ցավոք չունենք պայմաններ նրանց ուսուցումն ավելի լավ կազմակերպելու համար, չկան խելամիտ հարմարեցումներ, բայց ՏՄԱԿ-ի և ուսուցչի օգնականի համատեղ ջանքերով արվում է ամեն ինչ նրանց լիարժեք ինտեգրման համար:

Տնօրենի պարտականություններ ստանձնելու դեպքում կպահպանեմ դպրոցում արդեն ստեղծված ուսումնական միջավայրը, բարոյահոգեբանական մթնոլորտը մասնակցային կառավարման ձևը և ավելի հետևողական կլինեմ ԿԱՊԿՈՒ սովորողների լիարժեք ուսուցման կազմակերպման, ԱՈՒՊ-ների կազմման հարցում:

Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները

Կրթության որակի բարձրացման հարցում առաջնային դերը պատկանում է ուսուցչին, հենց ուսուցչի կատարելագործումը համարում եմ ծրագրի առանցքային կետերից մեկը, դրան կարելի է հասնել նրա դերի արժևորման, խրախուսման, անընդհատ վերահսկողություն իրականացնելու շնորհիվ, դպրոցն էլ իր հնարավորությունների սահմանում տալիս է նրանց ինքնակրթության տարբեր հնարավորություններ, քանի որ առանց ինքնակրթվելու, առանց ինքնակատարելագործման աշխատանքների ուսուցիչը կմնա նույն տեղում, չի կարողանա շարժվել ժամանակին զուգընթաց և ապահովել կրթության որակ:

Մանկավարժական համակազմի որակական բարելավումը հնարավոր է դառնում վերապատրաստումների ու ատեստավորման, առաջավոր փորձի փոխանցման, քննարկումների և խորհրդատվության, ՏՀՏ ընդլայնված ներդրման միջոցով: Իսկ

ուսուցիչների ավելի մեծ մոտիվացիայի համար խրախուսվում է դրույքաչափի բարձրացումը, պարգևավճարների հատկացումը, կրթության պետական կառավարման մարմինների կողմից խրախուսման իրականացումը: Անհրաժեշտ է նաև ոգևորել նրանց մասնակցել կամավոր ատեստավորման և տարակարգի շնորհման գործընթացներին:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Սովորողների ուսումնական գործընթացի համար հարմարավետ միջավայր ստեղծելու նպատակով պայմանավորված պետք է կատարվի ֆինանսական միջոցների ճիշտ կառավարում,այսիմաստովդպրոցիառջևխնդիրէդրված՝բարձրացնելուֆինանսավորմանպլանավորմաննծախսմանարդյունավետությունը, ծախսայինուղղություններըհամապատասխանեցնելուդպրոցիևսովորողներիկրթականկարիքներին:Դպրոցիֆինանսավորումնիրականացվումէհիմնադրի՝Հայաստանիհանրապետությանկողմից՝պետականբյուջեիմիջոցներից:Ֆինանսավորմանչափըձևավորվումէըստիրականացվողհանրակրթականծրագրերի՝կախվածսովորողներիթվից, իսկ 2023թվականիսեպտեմբերիցկհաշվարկվիդասարաններիթվով:Դպրոցինհատկացվածֆինանսականմիջոցներըծախսվումեն՝ելնելովդպրոցիկարիքներիցուհնարավորություններից:

Ֆինասատնտեսականգործունեությունըհստակէնթափանցիկ, նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունը տեղադրված է դպրոցի կայքում:

Դպրոցի ֆինանսական ծախսերը բաշխված են հետևյալ ուղղություններով.

1. *Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ*
2. *Եկամտահարկի վճարումներ*
3. *Գրասենյակային և տնտեսական ծախսեր*

4. *Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր*
5. *Էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսեր*
6. *Կոմունալ ծառայություններիվճարումներ*
7. *Կապիտալ ծախսեր*
8. *Այլ ծախսեր*

Ֆինանսավորման ցուցանիշը վերջին 3 տարիներին կազմել է.

Տարեթիվ	Ֆինանսավորման ցուցանիշ
2020 թ.	48,102,600 հհ դրամ
2021 թ.	48,893,300 հհ դրամ
2022 թ.	50,870,100 հհ դրամ

Ստորև ներկայացնում եմ դպրոցի բյուջեի ծախսային կատեգորիաները, 2022թ



3 ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՈՒԺԵՂ ԵՎԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

3.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանները

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Դպրոցի շենքի տեղակայումը հարմար է, գտնվում է գյուղի կենտրոնական մասում ➢ Ունի 12 դասասենյակ, որոնք արևկող են, լուսավոր և տաք ➢ Դպրոցն ունի ճաշարան և խոհանոց ➢ Տարածքը ցանկապատված է և անվտանգ սովորողների ազատ տեղաշարժման համար ➢ Դպրոցում գործում է Արմաթ լաբորատորիա ➢ Բակը ընդարձակ է՝ 500քմ տարածքով ➢ Մուտքի դուռը փոխված է	➢ Դպրոցի տիպային շենքի բացակայություն, դպրոցը գործում է հարմարեցված շենքերում ➢ Չունի սպորտդահլիճ, հանդիսությունների դահլիճ, առանձին կաբինետներ և լաբորատորիաներ ➢ Դասարանների դռները և պատուհանները փոխված չեն, դպրոցն ունի վերանորոգման կարիք ➢ ԿԱՊԿՈՒ սովորողների համար չկան խելամիտ հարմարեցումներ և պայմաններ, մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցման սենյակ ➢ Լոկալ ջեռուցման և գազաֆիկացման բացակայություն ➢ Դպրոցը չունի պահուստային ելքեր

3.2 Նյութատեխնիկական բազան

ՈՒժեղկողմեր	Թույլկողմեր
➢ Դպրոցն ունի բավարար քանակով սեղաններ, նստարաններ և գրատախտակներ ➢ Կահավորված խոհանոց և ճաշարան, սննդի պահեստ, սառնարան, գազօջախ, պահարան, լվացարաններ և այլն ➢ Միացված է համացանցին, Արմաթ լաբորատորիան ունի համապատասխան կահավորում ➢ Կան 16 համակարգիչներ, որոնցից 5-ը անսարք են, առկա են առօրյա աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումներ՝ տպիչ, սկաներ, պրոյեկտոր և այլն։	➢ Դպրոցն ունի գրադարան, որի տարածքն, սակայն, շատ փոքր է և գրադարանային ֆոնդը աղքատ է ➢ Դպրոցը չունի լաբորատորիաներ և համապատասխան նյութեր ➢ Մարզագույքի բացակայություն ➢ Ժամանակակից համակարգիչ ների, սմարթ գրատախտակի բացակայություն ➢ Մագնիսական և մարկերային գրատախտակների անհրաժշտություն ➢ ԿԱՊԿՈՒ սովորողների համար անհրաժեշտ անհատական տեխնիկական սարքավորումների բացակայություն

3.3 Տնօրենի և կառավարման խորհրդի, խորհրդակցական մարմինների համագործակցության վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Դպրոցում գործում է միացյալ կառավարման խորհուրդ, որը պարտաճանաչ կերպով անցկացնում է նիստեր, քննարկում է դպրոցի գործունեությանը վերաբերող հարցեր, վերահսկողություն է իրականացնում ԴԶԾ-ի կատարման նկատմամբ ➢ Մանկավարժական խորհուրդը կազմված է դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողներից, ովքեր գործուն ներգրավվածություն ունեն նոր չափորոշիչներին համապատասխան կրթության կազմակերպման հարցում, իրականացնում են հերթական նիստեր և վեր հանում մանկավարժական համակազմի առջև ծառացած խնդիրներ ➢ Ծնողական խորհուրդը կարևորագույն կապող օղակ է	➢ Խորհրդի անդամներից որոշները հանրակրթության ներքին խնդիրներին անտեղյակ են, քանի որ ուղիղ առնչություն չունեն այս ոլորտի հետ ➢ Խորհրդի անդամների զգալի մասը իրազեկված չեն իրենց գործառույթներից, լիարժեք չեն տիրապետում իրենց լիազորություններին, տեղեկացված չեն օրենսդրական փոփոխություններին ➢ Ակտիվության և նախաձեռնողականության պակաս, կապված հասարակական հիմունքներով աշխատանքի հետ ➢ Աշակերտական խորհուրդը պասիվ է ստեղծագործական բնույթի միջոցառումների կազմակերպման հարցում

դպրոցի և ծնողների միջև, ներգրավված է ուսումնա դաստիարակչական աշխատանքներում և պաշտպանում է սովորողների շահերը դպրոցում ➢ Աշակերտական խորհուրդը երաշխավորում է սովորողների ազատ կամահայտության իրավունքը ➢ Այս բոլոր մարմինները գործում են տնօրենի հետ սերտ համագործակցությամբ, ելնելով սովորողի շահերից, առաջին տեղում դնելով կրթության որակը և ուսումնական բարենպաստ միջավայրը	

3.4 Հաստատության համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր

➢ Դպրոցը համագործակցում է կրթության կառավարման մարմինների հետ, կատարում է լիազոր մարմնի՝ օրենքին չհակասող հանձնարարական ները ➢ Մասնակցում է մարզային միջոցառումներին՝ կրթության ոլորտում կազմակերպված ➢ Համագործակցային հարաբերություններ են հաստատված ԿԳՄՍ նախարարության, Լոռու մարզպետի աշխատակազմի, Տաշիրի համայնքապետարանի, Կաթնառատի վարչական ղեկավարի, ինչպես նաև ՆԳՆ ոստիկանության բաժնի, ԱԻՆ-ի հետ, ովքեր պարբերաբար հանդիպումներ են ունենում և զեկույցներով հանդես են գալիս բարձր դասարանների սովորողների մոտ ➢ Սերտ համագործակցում ենք նաև ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԳԹԿ-ի և ՏՄԱԿ-ի հետ:	➢ Հասարակական տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության բացակայություն ➢ Փոքր է համայնքի հետ իրականացվող միջոցառումների ծավալը ➢ Այլ ուսումնական հաստատությունների հետ կապի բացակայություն, համատեղ միջոցառումների կազմակերպման պասիվություն ➢ Բնակավայրից դուրս կազմակերպվող միջոցառումներին մասնակցության բարդու-թյուններ՝ պայմանավորված աշակերտներին տեղափոխելու տրանսպորտային սահմանափակումներով:

3.5 Ուսումնական միջավայր,
բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Ուսումնական հաստատությունում կրթական ծառայությունները մատուցվում են հնարավորինս ժամանակակից պահանջներին համապատասխան, ուսումնական միջավայրը անվտանգ է, առողջապահական, սանիտարահիգիենիկ պայմանները ապահովված են՝ հնարավորությունների սահմաններում ➢ Սովորողների և ուսուցիչների իրավունքները և շահերը պաշտպանված են, նրանք օժտված են ազատ կամահայտության իրավունքով ➢ Սովորողների շրջանում բացակայում է խտրական վերաբերմունքը, առանձնակի ուշադրություն է դարձվում	➢ Ուսումնական միջավայրի լիարժեքության համար խանգարող շատ մեծ հանգամանք է շենքային պայմանների բացակայությունը ➢ ԿԱՊԿՈՒ սովորողների համար չկան հարմարություններ, չկան թեքահարթակներ ➢ Դպրոցը չունի հոգեբան, հատուկ մանկավարժ ԿԱՊԿՈՒ սովորողների ներառումը համընդհանուր կրթական գործընթացին ավելի լավ կազմակերպելու համար

բռնության և հալածանքի կանխարգելմանը ➢ Ուշադրության կենտրոնում են գտնվում ԿԱՊԿՈՒ սովորողները, դպրոցում նրանց աջակցության համար ակտիվ աշխատանքներ է վարում ուսուցչի օգնականը	

3.6 Մանկավարժական համակազմը, աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Դպրոցի 25 մանկավարժներից 20-ը ունեն բարձրագույն կրթություն, 5-ը միջին մասնագիտական, որոնցից 2-ը հաղթահարել են կամավոր ատեստավորման անցողիկ շեմը ➢ Տնօրինությունը խրախուսում է կամավոր ատեստավորման, տարակարգի շնորհմանը մասնակցությունը ➢ Ուսուցիչները, հատկապես	➢ Ինքնակրթությամբ զբաղվող, ինքնակատարելագործվելու ցանկություն ունեցող մանկավարժների փոքր թիվ ➢ Միջին տարիքից բաձր ուսուցիչների կողմից ՏՀՏ կիրառման հարցում դժվարություններ ➢ <<Տարվա լավագույնները>> և մասնագիտական այլ մրցույթներին մասնակցության

երիտասարդները, ակտիվ օգտվում են էլեկտրոնային կրթական ռեսուրսներից, MS Teams և այլ հեռավար հարթակներից ➢ Դպրոցի գրեթե բոլոր մանկավարժները մասնակցել են պարտադիր ատեստավորման վերապատրաստման դասընթացներին՝ առկա և հեռավար ձևաչափով, և շարունակում են մասնակցել ԿԶՆԱԿ-ի կողմից իրականաց վող վերապատրաստումներին ➢ Ուսուցչամանկավարժական անձնակազմի դերի արժևորման ու կարևորության գիտակցմամբ է կատարվում ուսումնական հաստատության կառավարումը	բացակայություն ➢ Կամավոր ատեստավորման և տարակարգի շնորհման գործընթացներին մասնակցելու պասիվություն ➢ Խրախուսման միջոցների (ֆինանսական կամ նվերի տեսքով) սակավություն

3.7 Կրթության որակը,
չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Ուսուցման նոր մեթոդների ներդրմամբ մեծացել է առաջադիմությունը նախորդ տարվա համեմատ, չկան երկտարեցիներ և չառաջադիմողներ ➢ Իրագործվում են չափորոշչային պահանջները ➢ Կիրառվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնց զուգակցմամբ դասը դառնում է ավելի հետաքրքիր, իրագործվում է դասի նպատակը ➢ Սովորողների ուսման որակը բարձրացնելու, նրանց մոտ հմտություններ, կարողություններ ու հստակ դիրքորոշումներ զարգացնելու ուղղությամբ իրականացվում են շատ միջոցառումներ	➢ Օլիմպիադաներին և տարբեր տեսակի մրցույթներին մասնակցության պակաս ➢ Դասագրքերի բացակայություն կամ էլեկտրոնային տարբերակով հասանելիություն ➢ Անտարբերություն կրթության նկատմամբ, ինչը հաճախ գալիս է ընտանիքից ➢ Գերազանց առաջադիմություն ունեցող երեխաների քիչ քանակ

3.8 Օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
➢ Դպրոցն ունի ուսումնական և աշխատանքային համակարգիչներ, պրոյեկտոր ➢ Անհրաժեշտ գույքով ապահովված Արմաթ լաբորատորիա ➢ Դպրոցի ողջ տարածքն ապահովված է համացանցով, որը թույլ է տալիս ՏՀՏ օգտագործել ցանկացած դասարանում ➢ Ուսուցիչները օգտվում են ԿԶՆԱԿ-ի էլեկտրոնային նյութերից , Պաշարների շտեմարանից, Իմ դպրոց պորտալից, կազմում են թեստային աշխատանքներ Quizizz հարթակում	➢ Դպրոցը չունի համակարգչային կաբինետ ➢ Համակարգիչների և համակարգչային այլ տեխնիկայի պակաս, ցածր տեխնիկական զինվածություն ➢ Որոշ ուսուցիչներ միայն լրացուցիչ աջակցմամբ կարող են կիրառել ՏՀՏ միջոցներ դասապրոցեսի ընթացքում

3.9 Հաստատությունում առկա հիմնախնդիրները

Դպրոցի ամենամեծ հիմնախնդիրը, որը մենք կարող ենք արձանագրել կատարելով իրավիճակի հանգամանալից վերլուծություն՝ դպրոցի շենքային պայմանների, ավելի կոնկրետ դպրոցի տիպային շենքի բացակայությունն է: Այս շենքը որպես դպրոց սկսել է ծառայել 1990 թվականից, ընթացքում կատարվել են թեթև վերանորոգման աշխատանքներ, որոնք, սակայն, չեն լուծել գոյություն ունեցող լուրջ հիմնախնդիրները: Այս առանցքային հիմնախնդրից են առաջանում դպրոցում առկա մյուս խնդիրների մեծ մասը:

Դպրոցական շենքը երկհարկանի է, հարմարեցված՝ ոչ բարվոք վիճակում, այս շենքում տեղակայված են 7 փոքր չափի դասասենյակներ, տարրական դասարանները, նախակրթարանը և Արմաթ լաբորատորիան գտնվում են համապատասխանաբար համայնքապետարանի և մշակույթի տան առաջին հարկերում, որոնք գտնվում են հիմնական շենքից 100-120մ հեռավորության վրա, ինչը լրացուցիչ անհարմարություններ է առաջացնում ուսումնական գործընթացի կազմակերպման հարցում:

Մեկ դրական փաստ կարող ենք ամրագրել ծրագրում, դպրոցական նոր շենքի կառուցման հարցը այս պահին ընդգրկված է Կառավարության որոշմամբ 300 նոր կառուցվող դպրոցների ցանկում: Նոր շենքի կառուցումը,դրանից անմիջապես բխող նյութատեխնիկական բազայի հարստացումը կանրադառնա սովորողների կրթության որակի, ուսումնական առավել բարենպաստ միջավայրի ստեղծման, մանկավարժական և աշակերտական համակազմի առավել ակտիվ գործունեության վրա:

Լիահույս ենք, որ այս նոր շենքի կառուցման ծրագիրը կդառնա իրականություն և ես էլ կկարողանամ ամբողջապես իրականացնել իմ ծրագրի յուրաքանչյուր կետ, առանց բացառության, ունենալով դրա համար բոլոր պայմանները: Երեխաներն էլ, որ գյուղում չունեն ոչ մի հնարավորություն ժամանցի կազմակերպման, իրենց կարիքների և պահանջմունքների բավարար ման համար, ունենալով շենքային լիարժեք պայմաններ, նյութատեխնիկական հարուստ բազա, կկարողանան մասնակցել արդեն ավելի հաճախ

կազմակերպ վող միջոցառումներին, տարբեր խմբակների, որոնք ավելի հետաքրքիր ու բազմազան կլինեն,քան հիմա, և գոնե փոքր ինչ կփոխեն նրանց ձանձրալի առօրյան:

Վերոնշյալից զատ, դպրոցն ունի նաև հիմնախնդիրներ, որոնք կապված չեն շենքային պայմանների հետ, դա մասնավորապես կապված է համագործակցության հետ, պասիվ է համագործակցությունը համայնքի, տարբեր կազմակերպությունների, այլ ուսումնական հաստատությունների հետ, չեն կազմակերպվում համատեղ միջոցառումներ, խորհրդակցություններ և խորհրդատվություններ: Կառավարման և խորհրդակցական մարմինները պատշաճ կերպով իրազեկված չեն իրենց գործառույթներին և լիազորություններին, ինչը որոշակիորեն պասիվացնում է նրանց աշխատանքը ուսումնադաստիարակչական և կառավարման գործընթացներում: Ստորև ներկայացնում եմ

Ոլորտ	Հիմնախնդիր
Հաստատության շենքային պայմանները, Նյութատեխնիկական բազան	Տիպային շենքի բացակայություն, նյութատեխնիկական աղքատ բազա, ֆինանսական միջոցների սղություն
Հաստատության տնօրենի, կառավարման և խորհրդակցական մարմիններ համագործակցությունը	Համագործակցության պասիվություն, իրազեկվածության ցածր մակարդակ, հազվադեպ կազմակերպվող հանդիպումներ
Հաստատության համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ	Համագործակցության պասիվություն, համատեղ կազմակերպվող միջոցառումների բացակայություն
Ուսումնական միջավայր, բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի	Կողմերի ներգրավվածության, շահագրգռվածության պակաս, Ֆինանսական միջոցների սղություն
Մանկավարժական համակազմը, աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների	Մանկավարժական համակազմի մոտ ձևավորված կարծրատիպեր, խրախուսման և արժևորման մեխանիզմների սակավություն

Կրթության որակը, չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն	Օլիմպիադաների, տարբեր մրցույթների մասնակցության ցածր ցուցանիշներ
Օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները	Ցածր տեխնիկական զինվածություն, լաբորատորիաների, կաբինետների բացակայություն

4 ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Կատարելով ներկա իրավիճակի վերլուծություն, վեր հանելով դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, արձանագրելով հիմնախնդիրները, մենք կարող ենք կատարել նպատակադրումներ, որոնք կմեղմեն ներկա իրավիճակը և հնարավորինս կվերացնեն հիմնախնդիրները, այդ նպատակները պետք է լինեն իրատեսական և կատարելի, որպեսզի չմնան գրված թղթի վրա, այլ իրականացվեն: Իսկ արդեն իսկ նոր շենք ունենալու դեպքում՝ իրականացնելով ծրագրի նպատակները, մենք կունենանք 21-րդ դարին համապատասխան դպրոց, որտեղ կապահովվի դպրոցի բնականոն և արդյունավետ գործունեությունը:

Զարգացման ծրագիրը կազմելիս պետք է հաշվի առնել մեկ փաստ ևս,քանի որ նախատեսված է նոր դպրոցականշենքի կառուցում, ուստի նպատակահարմար չէ այս պահին մեծ ֆինանսական միջոցների ներդրում ծրագրել այս հին շենքի բարեկարգման համար, այդ պատճառով ավելի շատ պետք է կենտրոնանալ մյուս ոլորտների վրա, իսկ շենքային պայմանները բարելավել այնքանով, որ ապահովված լինի սովորողների անվտանգ և հնարավորինս հարմարավետ ուսումնական միջավայրը:

Զարգացման ծրագրում սահմանված նպատակներ.

1. Հանրակրթական պետական չափորոշչին համապատասխան ուսումնական գործընթացի իրականացում,կրթության որակի բարձրացում, ԿԱՊԿՈՒ սովորողների լիարժեք ներառում
2. Մանկավարժական համակազմի մասնագիտական կատարելագործում, կազմակերպչական կարողություններիզարգացում
3. Ազգային և պետական արժեհամակարգ ստեղծող մասնակցային կառավարման ապահովում, կառավարման արդյունավետության բարձրացում
4. Մասնագիտական կողմնորոշում ունեցող, կարողունակ և հասարակությանն ինտեգրված քաղաքացու ձևավորում, ով վաղ տարիքից գիտակցում է երկրի և համայնքի կարիքները
5. Ներքին կարգավորման իրավական ակտերի շարունակական բարելավում և շահառուների իրազեկվածության բարձրացում

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար գոյություն ունեն որոշակի խնդիրներ, որոնց լուծմանն ուղղված գործողությունների և միջոցառումների շրջանակը կներկայացնեմ աղյուսակի տեսքով:

Զարգացման ծրագրի խնդիրներն են.

1. Շենքային պայմանների բարելավում, հաստատության նյութատեխնիկական բազայի հարստացում
2. Ապահովել անվտանգ , բարենպաստ ուսումնական միջավայր,ԿԱՊԿՈՒ սովորողների համար խելամիտ հարմարեցումներ
3. Զարգացնել սովորողների նախասիրությունները և կարողությունները խթանող արտադասարանական և արտադպրոցական ծառայությունները
4. Ուսուցիչների մասնագիտական գիտելիքների , աշխատանքային ունակությունների կատարելագործում, ՏՀՏ-ների լիարժեք տիրապետում նրանց կողմից
5. Մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածության բարձրացում, ստեղծագործական ունակությունների դրսևորում
6. Աշխատակազմի աշխատանքային կարգապահության բարձրացում

7. Խորհրդակցական մարմինների ակտիվ ներգրավվածություն կառավարման գործընթացին, կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համագործակցության խորացում
8. Յուրաքանչյուր մարմնի իր գործառույթների մասին իրազեկում
9. Աշակերտների ինքնավարության խթանում, կայուն արժեհամակարգի ձևավորում
10. Սովորողներին կրթության պրոցեսում մոտիվացում և առաջադիմության բարձրացում
11. Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների իրականացում, պետական և տեղական կառավարման մարմինների և այլ ուսումնա կան հաստատությունների հետ համագործակցության ընդլայնում
12. Իրավական գրագիտության բարձրացում
13. Ներքին իրավական ակտերի նախագծերի քննարկմանն և դրանց ընդուն մանը մանկավարժական համակազմի մասնակցության ապահովում

Ծրագրում սահմանված խնդիրների լուծման և նպատակների իրականացման դեպքում, որպես **արդյունք** մենք կունենանք.

1. Բավարար շենքային պայմաններով և նյութատեխնիկական բազայով հարուստ դպրոց
2. Ուսումնամանկավարժական հմուտ, օրեցօր կատարելագործվող անձնակազմ
3. Մասնակցային կառավարում, որտեղ հաշվի է առնվում յուրաքանչյուր ուսուցչի և աշակերտի կարծիք
4. Սոցիումին ինտեգրված, մրցունակ, մասնագիտական կողմնորոշում ունեցող սերունդ
5. Դպրոցի խնդիրներով մտահոգ խորհրդակցական մարմիններ, ովքեր իրազեկված են ներքին իրավակարգավորումներին և անձամբ մասնակցում են դրանց ստեղծմանը

5. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը

Նպատակ 1 - Հանրակրթական պետական չափորոշչին համապատասխան ուսումնական գործընթացի իրականացում, կրթության որակի բարձրացում, ԿԱՊԿՈՒ սովորողների լիարժեք ներառում

Խնդիրներ –1. Շենքային պայմանների բարելավում, հաստատության նյութատեխնիկական բազայի հարստացում

2. Ապահովել անվտանգ , բարենպաստ ուսումնական միջավայր, ԿԱՊԿՈՒ սովորողների համար խելամիտ հարմարեցումներ
3. Զարգացնել սովորողների նախասիրությունները և կարողությունները խթանող արտադասարանական և արտադպրոցական ծառայությունները

Գործողություններն միջոցառումներ	Կատարող	Ժամանակացույց	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմներ	Նյութատեխնիկական միջոցներ

• Ուսումնական հաստատության ընթացիկ վերանորոգման աշխատանքներ	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, բանվոր, հրավիրված աշխատակիցներ	2024-2029թթ	Հարմարավետ և տրամադրող միջավայր	Զարգացման ծրագրի տարեկանհաշվետվություն (ԶԾՏՀ)	Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
• Դպրոցի անհրաժեշտ գույքի և տեխնիկական միջոցների ձեռքբերում	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող	2024-2026թթ	Գույքով ապահովված, տեխնիկապես հագեցած ուսումնական միջավայր	Առկա գույք և տեխնիկա, հանձնման-ընդունման ակտ	Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
• Դպրոցի բակային տարածքի բարեկարգում, կանաչապատում	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, բանվոր	2024-2029թթ	Կանաչապատ և բարեկարգ տարածքով բակ	Աշխատանքների կատարողականի ակտ	Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
• Միջանցքների արդիականացում, թեմատիկ, ազգային-մշակութային մոտիվներով ձևավորում	Տնօրեն, ուսումնական գծով տեղակալ, մեթոդական միավորումներ, աշակերտական խորհուրդ	2024-2025թթ	Կարևոր տեղե կատվությամբ հագեցած և գեղեցիկ պաս տառներով ձևա վորված միջանցքներ	Քննարկումներ մեթոդ միավորումների, աշակերտական խորհրդի հետ	Դպրոցի բյուջե, առարակայակն պաստառներ, պատի թերթեր

• Դպրոցը շուրջօրյա տեսահսկողության համակարգով ապահովում, տեսախցիկների տեղադրում	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, հրավիրված մասնագետ	2024թ	Դպրոցում անվը տանգ միջավայրի ստեղծում, անցուդարձի մշտական հսկողություն	Տեսախցիկների առկայություն, ծառայությունների մատուցման պայմանագիր	Դպրոցի բյուջե
• Սովորողների կրթությանորակի, առաջադիմության բարձրացում	Տնօրեն, ուս. գծով տեղակալ,դասղեկներ, ուսուցիչներ, մեթոդ միավորումներ	2024-2029թթ	Կրթության որակի բարելավում, տարեկան առաջադիմությունը մինչև 2029թ հասցնել 45% և ավել	Քննություններ և չափորոշչով սահմանված ակնկալվող արդյունքներ	Ֆինանսական միջոցներ չիպահանջում,տեխնիկական միջոցներ, արագ ինտերնետ կապ, մասնագիտական գրականություն
• ԿԱՊԿՈՒ սովորողների համարանհրաժեշտ անհատական տեխնիկական սարքավորումների ձեռքբերում	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, ուսուցչի օգնական	2024-2029թթ	Ուսումնական հարմարավետ միջավայրի ապահովում	Առկա տեխնիկական միջոցներ, հնաձնման-ընդունման ակտ	Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
• Հետաքրքիր ու նորարական ուսումնական մեթոդներիկիրառում	Տնօրեն, ուս. գծով տեղակալ, մեթոդ միավորումներ, ուսուցիչներ	2024-2029թթ	Չափորոշչին համապատասխան կրթություն, ուսման որակի բարձրացում	Քննարկումներ մեթոդմիավորումների, առանձին ուսուցիչների հետ,կրթության արդյունքներ	Դիդակտիկ նյութեր, անհրաժեշտ տեխնիկական միջոցեր

• Երկարօրյա դասընթացների կազմակերպում	Տնօրեն, ուս. գծով տեղակալ, ուսուցիչներ, ծնողներ	2024-2029թթ	Ուսուցման գործընթացում թերացող,ինչպես նաև ԿԱՊԿՈՒ սովորողների առաջընթաց	Ընթացիկ զեկույցներ, հրամաններ, աշակերտների ցուցաբերած արդյունքների վերլուծություն	Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ

Ռիսկեր	Ռիսկերը մեղմացնող գործողություններ
1. Ֆինանսական միջոցների սղություն 2. Դպրոցական շենքի փոքր չափ 3. Սովորողների անտարբերություն 4. Ուսուցիչների մոտ ձևավորված կարծրատիպեր 5. Երկարօրյա ուսուցման արդյունավետության հանդեպ անվստահություն	1. Պլանավորել ֆինանսական գործունեությունը և կառավարումը, համագործակցել վարչատնտեսական համակարգողի հետ, փնտրել արտաբյուջետային միջոցներ, բարերարներ 2. Ճիշտ օգտագործել ունեցած տարածքը, կահավորանքը իրականացնել տարածության ճիշտ հաշվարկմամբ 3. Մոտիվացնել սովորողներին, յուրաքանչյուրին անհատական մոտեցում ցուցաբերել, դասերը

	անցկացնել դիդակտիկ պարագաներով 4. Ուսուցիչներին խրախուսել կիրառել նոր մեթոդներ և ՏՀՏ տեխնոլոգիաներ 5. Իրականացնել հանդիպումներ, ներկայացնել երկարօրյայի կարգը և դրա կիրառման առավելությունները, ոգևորել օրինակներով

Նպատակ 2 - Մանկավարժական համակազմի մասնագիտական կատարելագործում, կազմակերպչական կարողությունների զարգացում

Խնդիրներ– 1. Ուսուցիչների մասնագիտական գիտելիքների , աշխատանքային ունակությունների կատարելագործում, ՏՀՏ-ների լիարժեք տիրապետում նրանց կողմից

2. Մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածության բարձրացում, ստեղծագործական ունակությունների դրսևորում
3. Աշխատակազմի աշխատանքային կարգապահության բարձրացում

Գործողություններ և միջոցառումներ	Կատարող	Ժամանակացույց	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմներ	Նյութատեխնիկական միջոցներ

• Ուսուցչականանկավարժականանձնակազմիշարունակական վերապատրաստումներ, ինքնակրթության խթանում	Տնօրեն, ուս. գծով տեղակալ, մեթոդ միավորումներ	2024-2029թթ	Բարձր առաջադիմություն ապահովող, սեփական նախաձեռնություններով հանդես եկող ուսուցիչներ	Վերապատրաստումների մասնակցության հաշվետվություններ	Դպրոցի բյուջե, տեխնիկական միջոցներ
• Խորհրդակցություններ իկազմակերպում,խրախուսումպարտադիր և կամավորատեստավորմանը,տարակարգիստացմանըև այլմրցույթներինմասնակցելու համար	Տնօրեն, ուս. գծով տեղակալ, մեթոդ միավորումներ	2024-2029թթ	Յուրաքանչյուր տարի կամավորատեստավորված և տարակարգ ստացած ուսուցիչների թիվ 2024թ՝ 2, 2025թ՝ 3 2026թ՝ 4, 2027թ՝ 5 2028թ՝ 6	Մեթոդ միավորումների նիստերի արձանագրություններ, ուսուցիչների հետ քննարկումներ	Ֆինանսավորում չի պահանջվում, համապատասխան մեթոդական ձեռնարկներ
• Հեռավարկրթության հմտությունները կատարելագործելու նպատակովուսուցիչների սեմինարներին, վեբինարներին մասնակցությանխթանում	Տնօրեն, ուս. գծով տեղակալ, մեթոդ միավորումներ	2024-2029թթ	ՏՀՏ-ների բոլոր հնարավորություններից օգտվող հմուտ մանկավարժներ	Քննարկումներ ուսուցչական համակազմի հետ	Ֆինանսավորում չի պահանջվում, համապատասխան մեթոդական ձեռնարկներ

• Դասալսումների արդյունքների հիման վրա մանկավարժներին անհրաժեշտ մեթոդական և մասնագիտական աջակցության ցուցաբերում	Տնօրեն, ուս. գծով տեղակալ, մեթոդ միավորումներ	2024-2029թթ	Սկսնակ ուսուցիչների հետ առաջավոր փորձի փոխանակում,փորձառու ուսուցիչների կողմից նոր մեթոդների կիրառում	Մեթոդ միավորումների նիստերի արձանագրություններ, ուսուցիչների հետ քննարկումներ	Ֆինանսավորում չի պահանջվում, համապատասխան մեթոդական ձեռնարկներ
• Կարգապահ աշխատողների,ինչպես նաև կատարողականի հիմանվրաանձնակազմ իխրախուսման նպարգևատրման բազմաչափհամակարգ իներդրում	ԿԳՄՍ, ԼՄ, Տնօրեն, վարչատնտեսական համակարգող	2024-2029թթ	Խրախուսվող և պարգևատրվող ուսուցիչներ, ովքեր ավելի կարգապահեն և ավելի մեծ նվիրումով են աշխատում	Տնօրենի հրաման, ԶԾՏՀ	Դպրոցի բյուջե

Ռիսկեր	Ռիսկերը մեղմացնող գործողություններ
1. Մանկավարժների մոտ կամավոր ատեստավորմանը մասնակցելու հետ կապված անվստահություն, վախեր 2. ՏՀՏ-ներից օգտվելու ունակության բացակայություն, ցանկության պակաս 3. Տարբեր վերապատրաստումների, սեմինարների, խորհրդատվութ յունների մասնակցության հանդեպ անհետաքրքրություն 4. Տեխնիկական միջոցների, մեթոդական գրականության սակավություն	1. Ոգևորել ուսուցիչներին՝ կազմա կերպելով հանդիպումներ կամավոր ատեստավորման շեմը հաղթահարած մանկավարժների հետ 2. Երիտասարդ ուսուցիչների կողմից ավելի մեծ աջակցություն ավագ սերնդին, դասերին ՏՀՏ կիրառման ցուցանիշի բարձրացում 3. Հաճախակի կազմակերպվող սեմինարներ, վեբինարներ (ընդ որում մոտիվացնող), քննարկումներ 4. Ձեռք բերել հնարավորինս մեծ թվով մեթոդական ուղեցույցներ և հետեվողական լինել, որ ուսուցիչները առաջնորդվեն դրանցով

Նպատակ 3 - Ազգային և պետական արժեհամակարգ ստեղծող մասնակցային կառավարման ապահովում, կառավարման արդյունավետության բարձրացում

Խնդիրներ - 1.Խորհրդակցական մարմինների ակտիվ ներգրավվածություն կառավարման գործընթացին, կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համագործակցության խորացում

2. Յուրաքանչյուր մարմնի իր գործառույթների մասին իրազեկում

Գործողություններն միջոցառումներ	Կատարող	Ժամանակացույց	Ակնկալվող Արդյունք	Չափման մեխանիզմներ	Նյութատեխնիկական միջոցներ
• Ապահովել խորհրդակցական մարմինների գործառույթների իմացությունը՝սեմինարների, հանդիպումների, զեկույցների միջոցով	Տնօրեն, ուս. գծով տեղակալ, խորհրդակցական մարմիններ	2024-2029թթ	Իրենց գործառույթներին իրազեկ խորհրդակցական մարմիններ	Հանդիպումների արձանագրություններ	Ֆինանսավորում չի պահանջվում, համապատասխան մեթոդական ձեռնարկներ
• Կառավարման գործընթացումխորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ իրականացում,հրապարակայնության և թափանցիկության ապահովում	Տնօրեն, ուս. գծով տեղակալ խորհրդակցական մարմիններ	2024-2029թթ	Պատշաճ իրականացվող, թափանցիկ և հրապարակային գործունեություն	Խորհրդակցական մարմինների աշխատանքային պլաններ, հաշվետվությունների հրապարակում դպրոցական կայքում	Ֆինանսավորում չի պահանջվում, տեխնիկական միջոցներ
• Ծնողներին մասնակից դարձնել սովորողների կրթության և դաստիարակության	Տնօրեն, ուս. գծով տեղակալ, ծնողական խորհուրդ,	2024-2029թթ	Ծնողական խորհրդի առավել մեծ ներգրավվածություն, սովորող	Ծնողական խորհրդի արձանագրություններ	Ֆինանսավորում չի պահանջվում, համապատասխան մեթոդական

գործընթացինապահովել առողջ համագործակցային աշխատանքային հարաբերություններ աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ծնող-ուսուցիչ օղակներում	աշակերտական համակազմ		ների կարիքների վերհանում		ձեռնարկներ
• Խորհրդակցական մարմինների միջև համագործակցության խորացում, հավասար պայմաններիապահովում	Տնօրեն, ուս. գծով տեղակալ խորհրդակցական մարմիններ	2024-2029թթ	Մասնակցային, ժողովրդավարական կառավարում,	Հանդիպումների արձանագրություններ, համատեղ քննարկումների արդյունքում ընդունված որոշումներ	Ֆինանսավորում չի պահանջվում, քննարկումների իրականացման համար կահավորված դասարան

Ռիսկեր	Ռիսկերը մեղմացնող գործողություններ
1. Կառավարման գործընթացին մասնակցելու ցանկության բացակայություն 2. Ծնողների պասիվություն, լիազորությունների չիմացություն, հեռավար հարթակ	1. Ներկայացնել կառավարման գործընթացին մասնակցելու կարևորությունը, խրախուսել մասնակցությունը 2. Իրազեկել ծնողներին իրենց

ներից օգտվելու հմտությունների պակաս 3. Համագործակցող կողմերի հետաքրքրվածության և նախաձեռնողականության պակաս, զբաղվածությամբ պայմանավորված ոչ հաճախակի հանդիպումներ	լիազորությունների մասին, բարձրացնել պատասխանատվությունը իրենց երեխաների առաջադիության հարցում 3. Հարմարեցնել հանդիպումների կազմակերպումը բոլոր շահագր գիռ կողմերին, խրախուսել նոր նախաձեռնությունները, կարևորել յուրաքանչյուրի դերը, և՛ որպես առանձին մարմին, և՛ այդ մարմնի դերը համագործակցության մեջ

Նպատակ 4- Մասնագիտական կողմնորոշում ունեցող, կարողունակ և հասարակությանն ինտեգրված քաղաքացու ձևավորում, ով վաղ տարիքից գիտակցում է երկրի և համայնքի կարիքները

Խնդիրներ–1. Աշակերտների ինքնավարության խթանում, կայուն արժեհամակարգի ձևավորում

2. Սովորողներին կրթության պրոցեսում մոտիվացում և առաջադիմության բարձրացում
3. Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների իրականացում, պետական և տեղական կառավարման մարմինների և այլ ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ընդլայնում

Գործողություններն միջոցառումներ	Կատարող	Ժամանակ ա ցույց	Ակնկալվող Արդյունք	Չափման մեխանիզմներ	Նյութատեխնիկական միջոցներ

• Սովորողների նախասի րությունների բացահայ տում, նրանց իրավունք ների և պարտականութ յունների քննարկում սեմինարների և աշխա տաժողովների միջոցով	Տնօրեն, դասղեկներ, առանձին ուսուցիչներ	2024-2029թթ	Սովորողներ, ովքեր կարող են օգտվել ի րենց տրված ինքնա վարությունից և ու նեն հստակ սահման ված նպատակներ Համայնքի հետ կա պի,համագործակցու թյան ամրապն դում	Արձանագրությունն եր, ձայնագրություն ներ	Ֆինանսավորում չի պահանջվում, տեխնիկական միջոցներ
• Համայնքիհետ համատեղծրագրերին նախաձեռնությունների իրականացում, այդթվումսոցիալ-մշակութայինմիջոցառում մներ՝ համայնքինհասար ակություններկայացուցի չներիմասնակցությամբ	Տնօրեն,դասղեկն եր համայնք, աշակերտական համակազմ	2024-2029թթ	Մասնագիտական կողմնորոշման հարցում աջակցություն ստացած սովորողներ	Արձանագրություն ներ, տեսաձայնա գրություններ	Ֆինանսավորում չի պահանջվում, դպրոցի նյութատեխնիկական բազա
• Ծնողական համայնքի հետ հանդիպումներi անցկացում՝իրենց մասնագիտությունների առանձնահատկությունն երի մասին,սովորողների մասնագիտական կողմ նորոշման աջակցում	Տնօրեն,դասղեկն եր, ծնողական և աշա կերտական համակազմ	2024-2029թթ	Իրենց հետագա մասնագիտության ընտրության հար ցումուսումնական հաստատություններ ի առաջարկներին ծանոթ սովորողներ	Արձանագրությունն եր, ձայնագրություն ներ	Ֆինանսավորում չի պահանջվում

• Տեղեկատվական հանդիպումներ՝մասնագիտական կրթություն առաջարկող ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ	Տնօրեն, այլ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ	2024-2029թթ		Արձանագրություններ	Ֆինանսավորում չի պահանջվում

Ռիսկեր	Ռիսկերը մեղմացնող գործողություններ
1. Սովորողների նախասիրությունների բացահայտման հետ կապված դժվարություններ 2. Համայնքի պասիվություն, կազմակերպվող միջոցառումների սակավություն	1. Հետևողական լինել, որ դասղեկները իրենց տարեկան աշխատանքային պլաններում ընդգրկեն սովորողների նախասիրությունների բացահայտման և մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ միջոցառումներ 2. Քննարկել համայնքի ղեկավար մարմինների հետ միջոցառումների կազմակերպման կարևորության հարցը՝ սովորողների կյանքում, հետևողական լինել, որ գործնական քայլեր ձեռնարկվեն այդպիսի միջոցառումների կազմակերպման և անցկացման համար

Նպատակ 5 - Ներքին կարգավորման իրավական ակտերի շարունակական բարելավում և շահառուների իրազեկվածության բարձրացում

Խնդիրներ – 1.Իրավական գրագիտության բարձրացում

2. Ներքին իրավական ակտերի նախագծերի քննարկմանն և դրանց ընդուն մանը մանկավարժական համակազմի մասնակցության ապահովում

Գործողություններև միջոցառումներ	Կատարող	Ժամանակացույց	Ակնկալվող Արդյունք	Չափման մեխանիզմներ	Նյութատեխնիկական միջոցներ
• Քննարկման փուլում գտնվող նախագծերի մասին տեղեկատվության տարածում, դրանց կազմման հարցում մանկավարժական անձնակազմի ներգրավվածության մեծացում	Տնօրեն, վարչական տնտեսական համակարգող, մանկավարժական համակազմ	2024-2029թթ	Իրավական դաշտում առավել իրազեկված և գրագետ անձնակազմ, ովքեր անմիջական մաս նակցություն են ու նենում այդ ակտերի ստեղծմանը	Քննարկումներ, արձանագրություններ	Ֆինանսավորում չի պահանջվում, նյութատեխնիկական բազա
• Գործող և փոփոխված իրավական ակտերի վերաբերյալ դպրոցի	Տնօրեն, դպրոցի անձնակազմ,	2024-2029թթ	Իրավական ակտերի ավելի	Քննարկումներ, արձանագրություններ	Ֆինանսավորում չի պահանջվում,

անձնակազմի իրազեկում, քննար կումներ խորհրդակցա կան մարմիններում, լուսաբանում	խորհրդակցական մարմիններ		դյուրին կիրառում		նյութատեխնիկական բազա

Ռիսկեր	Ռիսկերը մեղմացնող գործողություններ
1. Շահառու կողմերի մասնակցության ցանկության պակաս, իրավական ակտերի փոփոխություններին տեղեկացված չլինելը	1. Հաճախակի կազմակերպել իրազեկող հանդիպումներ, առաջացնել հետաքրքրություն, գործընթացի մասնակցության հանդեպ

6. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ

Դպրոցի զարգացման ծրագրի կատարման հիմնական պատասխանատուն դպրոցի տնօրենն է, ով կազմել է այդ ծրագիրը, նա է բոլոր գործողությունների և միջոցառումների կազմակերպիչը, որոնց կատարմամբ էլ կիրագործվի ծրագրով նախատեսված նպատակները և որպես այդ ամենի վերջնարդյունք, տնօրինման 5 տարիների ավարտին ծրագիրը գրեթե ամբողջությամբ կիրագործվի։

Ծրագրի կատարման մասին տնօրենը ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում կառավարման խորհրդին, ով հետևողական կերպով վերահսկում է ծրագրի կատարումը, այդ առումով կառավարման խորհուրդը նույնպես պատասխանատվություն է կրում ծրագրի կատարման հարցում:

Քանի որ ծրագրի կատարմանը անմիջական մասնակից են նաև մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդները, մեթոդական միավորումները, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը, ուստի նրանք ևս համարվում են ծրագրի կատարման հարցում որոշակի պատասխանատվություն կրող մարմիններ, քանի որ նրանց մասնակցությունից, պատրաստակամութ յունից, պատասխանատու վերաբերմունքից է կախված ծրագրով սահմանված նպատակների իրականացումը:

Ասվածից հետևվում է, որ դպրոցի ցանկացած աշխատակցի՝ տնօրենից մինչև բանվոր, գործող ցանկացած խորհրդակցական և կառավարման մարմնի կազմակերպված, հետևողական և արդյունավետ գործունեությունից է կախված ուսումնական հաստատութ յան ողջ հաջողությունը:

7. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Դպրոցի գործունեությունը գնահատվում է ներքին և արտաքին գնահատմամբ, ներքին գնահատումը իրականացնում է ուսումնական հաստատությունը, արտաքին գնահատումը՝ նախարարությունը: Ներքին գնահատման շնորհիվ ակնհայտ է դառնում, թե զարգացման ծրագրի որ դրույթներն են կատարվել ամբողջությամբ, իսկ որոնք՝ մասամբ:

Զարգացման ծրագրի նպատակների և խնդիրների իրագործման համար սահմանված գործողությունների արդյունքը գնահատելու համար կազմվում է արդյունքների գնահատման չափանիշներ, որոնց հիման վրա էլ հնարավոր է դառնում պարզել

զարգացման ծրագրի կատարողականը, մշակել նոր գործողություններ և անհրաժշտության դեպքում կատարել փոփոխություններ ԶԾ-ում, և ըստ կատարողականի կազմել ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը:

Ստորև ներկայացնում եմ գնահատման չափանիշների աղյուսակը.

Գնահատման ենթակա Գործողության բնույթը	*Արդյունքի գնահատականը*	*Արդյունքի գնահատման չափանիշները*
Ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավում, բակային տարածքի բարեկարգում	Անբավարար	Դպրոցի շենքային պայմանների բարելավում և բակային տարածքի բարեկարգում տեղի չի ունեցել
	Բավարար	Դպրոցի շենքային պայմանները մասամբ բարելավվել են, բակը չի բարեկարգվել
	Լավ	Դպրոցի շենքային պայմանները բարելավվել են, բակային տարածքը բարեկարգվել է, բայց լիովին չի համապատասխանում նպատակին
	Գերազանց	Կատարվել են վերանորոգման աշխատանքներ, հասել եմ սպասված վերջնարդյունքին
Նյութատեխնիկական բազայի հարստացում	Անբավարար	Նյութատեխնիկական բազան չի ավելացվել
	Բավարար	Ձեռք է բերվել քիչ քանակությամբ տեխնիկական միջոցներ
	Լավ	Նյութատեխնիկական բազան ավելացվել է, սակայն լիովին չի բավարարում կրթական պահանջներին
	Գերազանց	Դպրոցը ունի հարուստ տեխնիկական զինվածություն

Նոր նախագծերի և նախաձեռնությունների իրականացում	Անբավարար	Նոր նախագծեր և նախաձեռնություններ չեն իրականացվել
	Բավարար	Իրականացվել են մեկ- երկու նախագծեր՝ոչ լիարժեք արդյունքով
	Լավ	Իրակացվել են նոր նախագծեր, բայց նոր նախաձեռնություններում ակտիվ չեն
	Գերազանց	Իրականացվում են նոր նախագծեր և նախաձեռնություններ՝գերազանց արդյունքով
Սովորողների կրթության որակի և առաջադիմության բարձրացում՝ ըստ հանրակրթական պետական չափորոշչի սահմանած վերջնարդյունքների	Անբավարար	Կրթության որակի և առաջադիմության բարձրացում չի գրանցվել
	Բավարար	Կա մի փոքր առաջադիմություն,նախորդ տարվա համեմատ, սակայն չափորոշչի սահմանած վերջնարդյունքներին չենք հասել
	Լավ	Բարձրացել է կրթության որակն ու առաջադիմությունը, սակայն չափորոշչի պահանջները լիովին չեն կատարվել
	Գերազանց	Կրթության որակը և առաջադիմությունը բարձրացել է՝պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան
Դպրոցում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծում	Անբավարար	Ոչ մի գործնական քայլ չի իրականացվել նման միջավայր ստեղծելու համար
	Բավարար	Իրականացվել են որոշակի քայլեր, սակայն շահառու կողմերը պասիվ են
	Լավ	Դպրոցում ստեղծված է նման միջավայր, բայց դեռ թերություններ կան
	Գերազանց	Ստեղծված է բազմակարծիք, ներառական, մասնակցային լիարժեք միջավայր
Մանկավարժների	Անբավարար	Մանկավարժները պասիվ են, չեն աշխատում իրենց կատարելագործման ուղղությամբ, չկան խրախուսման միջոցներ

մասնագիտական կատարելագործում, անձնակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորում	Բավարար	Դպրոցը տալիս է ինքնակրթության հնարավորություններ, սակայն ոչ բոլոր մանկավարժներն են դրանից օգտվում
	Լավ	Մանկավարժները ակտիվ մասնակցում են վերապատրաստումների, սեմինարների, վեբինարների, արժևորման և խրախուսման միջոցները սակավ են
	Գերազանց	Օրեցօր կատարելագործվող մանկավարժական աշխատողներ, ինքնակրթության մեծ հնարավորություններ, խրախուսման և արժևորման ներդրված մեխանիզմներ
Կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցության խորացում	Անբավարար	Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համագործակցության բացակայություն
	Բավարար	Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համագործակցության թերի, ոչ լիարժեք մակարդակ
	Լավ	Համագործակցությունը ակտիվ է, սակայն գործառույթների տիրապետման մակարդակը՝ ցածր
	Գերազանց	Համագործակցությունը ամուր է, հաճախակի հանդիպումներ են կազմակերպվում, քննարկումներ, բոլորը իրազեկված են իրենց գործառույթներին
Պետական և տեղական կառավարման մարմինների, տարբեր հասարակական կազմակերպությունների, այլ ուսումնական հաստատությունների հետ համագործակցություն	Անբավարար	Համագործակցությունը բացակայում է
	Բավարար	Համագործակցությունը պասիվ է
	Լավ	Համագործակցությունը ակտիվ է, սակայն համատեղ կազմակերպվող միջոցառումները շատ հազվադեպ են
	Գերազանց	Կա խորը համագործակցություն, ակտիվ սոցիալ-մշակութային կյանք,կազմակերպվող տարատեսակ միջոցառումներ
Սովորողներին կրթության	Անբավարար	Սովորողների մոտ բացակայում է սովորելու ցանկությունը

պրոցեսում մոտիվացում և մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների իրականացում	Բավարար	Սովորողների համար կազմակերպվում են մոտիվացնող միջոցառումներ, սակայն անարդյունք
	Լավ	Սովորողները մոտիվացվում են, նկատվում է սովորելու հանդեպ հետաքրքրություն
	Գերազանց	Սովորողները ունեն բարձր առաջադիմություն և մասնագիտական կողմնորոշում
Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի շուրջ աշխատանքներ	Անբավարար	Շահառու կողմերը չեն մասնակցում իրավական ակտերի շուրջ աշխատանքներին
	Բավարար	Փորձում են մասնակցություն ցուցաբերել, սակայն իրազեկված չեն իրենց գործառույթներին այս ոլորտում
	Լավ	Շահառու կողմերը ակտիվ մասնակցում են իրավական ակտեր ինախագծերի քննարկումներին
	Գերազանց	Մասնակցություն են ցուցաբերում իրավական ակտերի ստեղծման գործընթացին, իրազեկված են օրենքներում, կարգերում կատարված փոփոխություններին

8. ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առանձին անրադառնալով բոլոր գործողությունների և միջոցառումների իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերին, ցանկանում եմ անրադառնալ նաև այն հնարավոր ռիսկերին, որոնք կարող են խոչընդոտել ամբողջական ծրագրի իրագործմանը, նման ռիսկերը կանխելու համար նույնպես կարող ենք մշակել մեղմացնող գործողություններ, մասնավորապես.

Ռիսկեր

1. Պետության սոցիալ-տնտեսական ծանր վիճակ
2. Ֆինանսավորման նվազումը
3. Ֆորս մաժորային իրավիճակներ
4. Թույլ վերահսկողություն ծրագրի իրականացման հանդեպ
5. Ծրագրի կատարման համար պատասխանատվություն կրող անձանց կամ մարմինների անգործությունը

Ռիսկերը մեղմացնող գործողություններ

1. Ծրագրի վերանայում, անհրաժշտության դեպքում փոփոխությունների կատարում
2. Ֆինանսական միջոցների ճիշտ կառավարում
3. Լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթում
4. Որպես ոլորտի առաջնորդ՝ ցանկացած իրավիճակում կողմնորոշվող, արագ ելքեր գտնող, կադրերի նշանակում
5. Վերահսկողության բարձրացում
6. Պատասխանատվության խրախուսում
7. Համագործակցության շրջանակի ընդլայնում

Կյանքի ցանկացած բնագավառում, ցանկացած ոլորտում կարող են ի հայտ գալ տարբեր տեսակի վտանգներ, որոնք կխոչընդոտեն մեզ անցնելու մեր ճանապարհը, նույնն էլ ծրագրի իրագործման դեպքում, վերը նշված ռիսկերը, և շատ ռիսկեր էլ, որոնք ես չեմ կարող կանխատեսել, կարող են խոչընդոտ հանդիսանալ ծրագրի իրագործման ճանապարհին, բայց նման իրավիճակներում ամենակարևորը ճիշտ հաշվարկել քայլերն ու գործողությունները այդ ամենը հարթելու համար: Եվ շատ կարևոր է նաև ունենալ բանիմաց, փորձառու թիմ, որպեսզի նրանց աջակցությամբ ամեն ինչ ավելի արագ և հեշտությամբ հաղթահարվի:

9. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցների և պարագաների մասին աղյուսակում ներկայացվեց, ծրագիրը կազմված է այնպես, որ իրագործումը մեծ ֆինանսական միջոցներ չի պահանջում, գործողությունների մի մասը՝ հիմնականում շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի հետ կապված, կիրագործվի դպրոցի բյուջեի հաշվին կամ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներով, մինչ նոր շենքի կառուցումը:Գործողությունների մեծ մասի իրագործման համար պահանջվում է նյութատեխնիկական հարուստ բազա, մի շարք պարագաներ՝ դիդակտիկ նյութեր, քարտեզներ, պաստառներ, գրքեր, մեթոդական ուղեցույցներ, ձեռնարկներ, գրենական պիտույքներ: Երեխաների ֆիզիկական կրթության, առողջ ապրելակերպի կազմակերպման համար անհրաժեշտ է մարզագույք, նոր չափորոշիչներով դասեր անցկացնելու համար՝ ՏՀՏ տեխնոլոգիաներ: Այս ամենը հնարավորության չափով կփորձենք ձեռք բերել, սակայն սա լիարժեք պայմաններ չի ստեղծի, մինչև չլուծվի դպրոցական շենքի հարցը, բայց դա չի նշանակում, որ պետք է անգործության մատնվել, պետք է ապահովել բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի երեխաները չտուժեն և լիարժեք իրացնեն իրենց կրթության իրավունքը:

10. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Զարգացման ծրագրի վերահսկողությունը, ինչպես բազմիցս նշվեց, իրականացնում է դպրոցի կառավարման խորհուրդը՝ տարեկան առնվազն երկու անգամ՝ ամեն կիսամյակի վերջում: Վերահսկողության իրականացումը շատ կարևոր է, քանի որ վերահսկողության առկայության դեպքում ավելի է բարձրանում կատարողականությունը, պատասխանատվությունը և

պատրաստակամությունը: Վերահսկողության հիմնական միջոցը զարգացման ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունն է, որը իրենից ներկայացնում է ծրագրի ցանկացած նպատակի իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքները, զարգացումները, գործողությունների չկատարման կամ թերի կատարման պատճառները: Հաշվետվության մեջ նշվում է նաև փոփոխությունների և լրացումների կատարումը: Սրանով ապահովվում է հաշվետվողականությունը և գնահատվում է ծրագրից բխող տարեկան պլանավորումների արդյունավետությունը:Հաշվետվողականությունն ապահովելու նպատակով կազմվում են հաշվետվության ձևեր, որոնք ներկայացվում են խորհրդի հաստատմանը՝ համաձայն տվյալ օրինակելի ձևի, թե՛ ծրագիրը, և թե՛ հաշվետվությունները կտեղադրվեն դպրոցի կայքում:

Վերահսկողության մեխանիզմների ներդրման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումներն ու ակնկալվող արդյունքները.

1.	Տարեկան աշխատանքային պլանների կազմում, տարվա կտրվածքով անելիքների հստակեցում, պլանների կազմում ըստ զարգացման ծրագրի, տարեվերջին ամփոփում և արդյունքների գնահատում	Կատարված աշխատանքների տեսանելիություն և համակարգվածություն
2.	Գործողությունների կատարման արդյունքների ներկայացում, չիրականացման դեպքում դրանց պատճառների բացահայտում, ըստ այդմ ավելի իրատեսական նպատակադրումներ	Կատարողականության առավել մեծ ցուցանիշ
3.	Ֆինանսական միջոցներին համապատասխան՝ նյութատեխնիկական բազայի հարստացում	Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում, հարմարավետ ուսումնական միջավայր
4.	Կրթական ծառայությունների որակի բարձրացում	Որակյալ կրթական ծառայությունների համար անհրաժեշտ միջոցներ, առաջադեմ, տարբեր մրցույթների, օլիմպիադաների մասնակցող սովորողներ
5.	Իրավական դաշտի կարգավորումներ,	Բարենպաստ միջավայր ստեղծող

	փոփոխություններ	իրավական կարգավորումներ
6.	Տարեկան աշխատանքային պլանների քննարկում	Պլանավորման արդյունավետության բարձրացում
7.	Շահառու կողմերի կարծիքների վերլուծություն	Մասնակցային կառավարում, կրթության գործընթացի յուրաքանչյուր մասնակցի կարծիքի կարևորում

Սահմանված ձևաչափով ուղարկվող հաշվետվությունների հետ միաժամանակ, յուրաքանչյուր իրականացված միջոցառման առանձնահատկությունից բխող տեղեկանքները նույնպես ներառվելու են հաշվետվությունների մեջ `կից տեղեկանքի կամ կցված այլ ձևաչափերի տեսքով:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

No	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ	Նշումներ